ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » նոյեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-394-16.10.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1555 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-394-16.10.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով լրացվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջիկայում նախատեսում է հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, որի նպատակն է եկամտային հարկի սանդղակավորված դրույքաչափերից անցնել եկամտային հարկի միասնական դրույքաչափի: Նշված օրենսդրական առաջարկության ընդունման պարագայում այլևս էական չի լինի մայրության նպաստի, որպես եկամուտ, հաշվառելու եղանակը:

2. Մայրության նպաստները դրամարկղային սկզբունքով հաշվառելու և հարկելու հիմնավորման վերաբերյալ պետք է նկատել, որ հարկային հաշվառման և հարկային վարչարարության տեսանկյունից հարկային պարտավորությունների հաշվարկման դրամարկղային մեթոդն ավելի դյուրին է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն ենթադրում է հարկի հաշվարկման պարտավորության առաջացում այն պահին, երբ եկամուտը փաստացի վճարվում է: Մինչդեռ, հարկի հաշվարկման հաշվեգրման մեթոդն այս դեպքում ավելի բարդ է, քանի որ այն ենթադրում է, որ հարկային գործակալները պարտավորված կլինեն հաշվարկել մայրության նպաստի՝ յուրաքանչյուր ամսվան հասանելիք մասը և դրան համապատասխան հարկի գումարը, ինչը հարկային պարտավորությունները ճիշտ հաշվարկելու առումով լրացուցիչ ռիսկեր կարող է ստեղծել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 նոյեմբերի 2018 թվականի N 1555 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-394-16.10.2018-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 21
Երևան

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 150-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետով.

«16. Հայաստանի Հանրապետության «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի օրենքի 11-րդ հոդվածով սահմանված վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է ըստ յուրաքանչյուր ամսվան բաժին ընկնող եկամտի համար կիրառվող դրույքաչափի»:

Հիմնավորում

Նախագիծը կոչված է կանոնակարգել այն դեպքերը, երբ ամսական հարկումը կատարվում է մի դրույքաչափի սահմաններում, սակայն մայրական նպաստի միանվագ փոխանցման դեպքում կիրառվում է ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված այլ հարկման դրույքաչափ, քանի որ փոխանցվող գումարն ավելին է օրենսգրքով նախատեսված համապատասխան սահմանաչափից: Փաստացի քաղաքացին վճարում է առավել բարձր հարկ, քան կվճարեր նշված եկամուտն ամսական ստանալու պարագայում՝ համապատասխան սահմանաչափը գերազանցելու պատճառով:

Օրենքում առաջարկվող փոփոխությունը թույլ կտա վերացնել առաջացող անարդարությունը և տրամադրել քաղաքացուն իրեն հասանելիք նպաստը (եկամուտը) մինչ այդ կիրառվող հարկման դրույքաչափով: